

ԳԼՈՒԽ II

ՄԱՅՎԱԾ, ՀՈԳՈՒ ԵՎ ՀԱՍԴԵՐՁՅԱԼ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱԾ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՆ ՈՒ ՆԱԽՎՈԱՇԱՐՈՒՄՆԵՐԸ

Թաղման հետ կապված նշված ժիսական արարողություններից գատ եայ ժադավուրդը ունի բագում սովորություններ, հավատալիքներ ու նախապաշարումներ, որոնք հիմնականում աղերսվում են. ա) հոգու. անմիտական ըմբոնման, բ) արկի, զ) հաց ու ջրի, դ) խոսքի, ե) քարի ու հողի, գ) խաչի ու երեք, յոթ, քառասուն սուրբ եամար-ված թվերի, է) ձախ-աջ, շրջունշիտակ ընդունված պայմանականությունների հետ:

ա) Թաղման ծեսի առաջնակարգ նպատակը հիգուն րավարաբելն ու հանգստացնելն է («Հոգեհանգիստ»): Քանի որ, ըստ ժողովողի պատկերացման մարմնի մահանալուց հետո հոգին շարունակում է ապրել, ապա նա պետք է որոշակի հարաբերությունների մեջ մտնի կենդանի մարդկանց հետ: Մինչև մարմնը հողին հանձնելը հոգին սավառնում է նրա շուրջը, տեսնում ու լսում կատարվածը, ապա կամ նշան հետ թաղվում է ու հանգրվանում ստորգետնյա աշխարհի յոթ ճեղքերից մեկում, կամ սավառնում երկինք և տեղ գրավում նրա յոթ (երրենն նաև երեք) շերտերից մեկում: Եվ եթե ամենաերանելին յոթերորդ երկինքն է, ամենաանտանելին էլ գետնի յոթերորդ խորշն է: Քանի որ մարդու կյանքի տևողությունը նախասահմանված է, ուրեմն ժամանակին հոգին առնելու էին գալիս Աստծո սպասավորները: Սեղավորների հոգին լինում է սև ու գարշահոտ, արդարներինը՝ անուշահոտ ու լուսի պես պայծառ: Հոգին առնելուց առաջ հրեշտակը հետապնդում է հիվանդին, որը հաճախակի փոխում է տեղը, գարիուրում նրա տեսքից և գիշերները երագում լսում մեղծավոր հանգուցալների ձայնները, որոնք

մյուս աշխարհից կանչում են իրեն: Արդար մարդու ետևից եկած հրեշտակները կամ չարին եետևող սատանաները իրենց կապույտ ու սև ճիպուններով խվում են եկվանդին ու նրա մարմնի վոյա րծեր առաջացնում: Կանում¹ և այլուր եավատացած էին, որ հիվանդների հետևից նախ գալիս են գրողները, որոնք գրում են մարդկանց բարի ու չաը գործերը, նրանց սպասվող դեպքերը («գրողի տարած», «գրողի դավթար գրվես», «գրողը տանի») և հաշվարկում են նրա մահվան օրը: Այնքան իյորն էր այդ հավատը, որ վասպուրականցի Հոռոմ մամիկը պատմում է, թե իր քեռին ու քեռաղեն (մորական պապը) տասնյակ տարիներ առաջնորդել են գրողներին, նրանց ցույց տվել ցուցակում նշված մարդկանց²:

Հոգին հանգստանում է մարմնի թաղումով և հաջորդ առավոհայան սգվորի «վայը» լսելուց հետո թոշում հեռանում է: Երկինք վերանալու համար արդար հոգին պետք է որ թևեր ունենա, այն շատ հաճախ ժողովողի մտապատկերում ունի թոշունի կերպարանք.

Այս կամարով աղբիր,
Իճապ ո՞ր երամ գնացիր:
Գիտնամ որ երամ գնացիր,
Ուստ անիմ, գամ ի քեզ ի տես³:

Հոգու թոհքը տևում է յոթ կամ քառասուն օր, որա համար յոթից քառասուն օր գերեզման են այցելում, մեռելատանը ճրագ լվառում, որ

¹ Առնե Ալիշան, Դին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 225, Խորեհեան Գ., Պառավաշունչ, Ազգագրական հանդես, գիրք 9, էջ 263, Արվանձուան Գ., Ասանանա, Երկեր, ե.1, Երևան, 1978, էջ 145:

² Հայայան Ե., Վասպուրական, ԱՐ, գիրք 15, էջ 56:

³ Ճանհիկան Յ., նշվ.աշխ.ս, եղա 10:

Արա ճանապարհը լուսավոր լինի: Երբեմն, երբ հոգեվարքը ծգկում է, մեռնողի ոտքերի տակ մեղր են քսում, որ գնալիք ճանապարհը քաղցր լինի⁴:

Յուղարկավորները գանագան միջոցների էին դիմում իյափանելու համար հոգու վերադարձը տուն, ննջեցյալի եամար օգտագործած թելի, կտորի մնացորդները, ասեղը թաղում էին հետք, մի եղունգ անզամ նրանից չէի կարելի պահել. անկողինը անլվա ծալում էին, շորերն ու անձնական իրեզը րաժանում, դագաղը խփում էին դռանը, պտտում, երբեմն անզամ տնից հանում էին պատի մեջ րացած ճեղքով⁵, պատանքում էին, ոտքերն իրար կապում, դագաղի վրա խոշոր քարեղ դնում: Որպեսզի մարմնին կաղուտած հոգին տուն գալու փոխարեն այցելի գերեզման, գերեզմանները տեղադրում էին բարձրադիր վայրերում, ծանապարհների կողքին: Բոլոր նշանավոր տոններին հաջորդող մեռելոցներին օրինել էին տալիս մերձավորների գերեզմանները, որ այցելության եկած հոգիները խաղաղված հեռանան: Յավատում էին նաև, որ պատշաճ ուշադրության չարժանացած հոգին զորնադար է դառնում:

Մեռելմերը դուրս էին գալիս գերեզմաններից և գայլի, շան կամ այլ կենդանու կերպարանքով ենտևում մարդկանց, նրանց հետ մտնում էին տուն և լույսը ծագելուն պես նորից անշնչացած վերածվում դիակի. սրանց գլուխը կտրում են և պատի անցքից հանելով՝ կրկին թաղում⁶: Սլավոնները նույնիսկ հատուկ ծես ունեն այս անգամների երկութող իսպահանմելու համար⁷:

Միշտ դատապարտվել է բոնի, պարտադրված մասը: Ըստ ժողովրդական մտածողության, սաանմասին հոգին մինչև ի և կայսրի նա-

⁴ *Luminous L.*, *Encyclopedia Britannica*, 113, chap. 9, p. 167.

Հայաստան, Բուլղարիա կազմու, և ու գործ է, էջ 187.
5 Լիսիցիան Ա, Անձնեղուրի հայերը, Երևան, 1969, էջ 208,
Ա.Սովորիանիս (Քենս), Ղազը (Աշո Բուլղարին), ՂԱԲ, պրակ
3, Երևան, 1972, էջ 38:

⁶ Свешникова Т., Волк в контексте румынского погребального обряда. Исследования в области балто-славянской духовной культуры, Погребальный обряд, Москва, 1990, с. 131.

Հայ, 1950, Ը. 131.
7 Սամուելյան Խ., Դայ ընտանեկան պաշտամունքը, ԱՐ, գիր 12, էջ 207. **Մրվանծոյան Գ.**, Մանանա, նույն աեցում, էջ 148:

իյասահմանված ժամկետի լրանալը դեգերում է անկայան ու անհանգիստ: Կայուն նստվածք ունի «մագք կամրջի» հավատը, որով հոգիները տեղափոխվում են մյուս՝ երանելի աշխարհը: Կամուրջը չի դիմանում մեղքերով ծանրաբեռ եղան տակ և փլվելով նրան գլորում է հավուտենական տարտարոսյան տանջանքների անդունդը: Այս հավատը երբեմն ունենում է իր իրական արտահայտությունները:

Հոգին հավերժական կյանք է ծեռք բերելու, երբ Վերջին դատաստանի օրը որոշվի նրա արդար կամ մեղավոր լինելը և Վերջնականապես տեղափոխվի դրախտում կամ դժոխքում («Արդարացն՝ կյանք եավիտենական, մեղավորացն՝ տանջանք հավուտենական»):⁸ Հոգիները Վերջին դատաստանին ներկայանալու են պատաճքը կամ դագաղը ուսած, դրա համար դագաղը ձգտում են թեթև փայտից պատրաստել («Յաւուր դատաստանին կալած-կապած սեւերես մնաս», «Պատաճքը վիզդ ման զաս, տեղը չը գտնես դադարելու»):⁹ Վերջին դատաստանի վերաբերյալ կան դազմաթիվ ժողովրդական երգեր: Աեա դրանցից մեկը.

ԾԵՍԻ ԾԱՐԻ ԾՈՒՐ ՄԱՐՈԵՌԱ

Սամուխը թեյ աս ասոին.

Եղիսաբետ Առաքելոց հուշարձնը

Oulib wepp awwad t-

Բայց արդու թալած է:

Ըստ կազմակերպության՝

ପ୍ରମାଣ କରିବାକୁ ଅନୁରୋଧ କରିଛା.

Վըսէս սարդոց սեղքս Ե

Արդարստիաց կու տայ
Խան էն ճան էն

Աջակողմեաս փառքս ու պաս

Դռան պասլիս արքավութենին

Երբան էնտեղ ուրախ էլնեն:

Փառք պատիւ տան Աստղեաւ

• Զանգեղուրում մի ժամանակ հանգույցալմերին խորան գետի կամբոզով էին տեղափոխում գերեզմանատուն։ Կամրջի մուտքի մոտ նատում էին ծերունիները և քննում մեռամի բարի ու չար արարքները։ Եթե գերավաշուում էին առաջինները, թույլ էին տալիս անցնել ու կազմակերպել թաղումը, իսկ եթե հանգույցալը մեղավոր էր ու վատահամրավ, թափողը ետ էր ուղարկվում, մինչև որ աղոքներով ու ողորմությամբ հարազատները քավինին նրա մեղքերու (Լիսիցյան Ա., Եղվաշխ., Ծովական)։ Այս հավաստը ունեն նաև հինգամաժամկետ, երիառաջահներու և այլու էւ Յ.

⁸ Դամական Ա., Կովաչինի, Երևան, 1960:

⁹ Ամբողջական Հ. Ալեքսանդր, Երևան, 1988.
ՍՄԻՒԹՅԱՆՑ Ա., Փշանք Շիրակի ամբարներից, ԷԱԾ. հ.Ա. Արտավազ, 1991, թ. 134:

Վայելեն երկնից ամվերք երանութիւն:
Սեղաւրացն՝ չարչարանք,
Դառնիկ լացը ու խղճնտանք.
Դժիխոց հուրն կրակին,
Պիտի մաշի ինոնց խոգիյն¹⁰:

Այնքան նշանակալից է վիրջին դատաստանի հավատը, որ հայ ճարդը իր ամբողջ կյանքում նախապատրաստվում է դրան՝ «Դատաստան կա գալու, պատասխան կա տալու»¹¹:

Ըստ ժողովողական մտածողության՝ հոգին հաճախ գետեղփում է որևէ կենդանու, ծառ ու ծաղկի, իսկ հաճախ՝ քարի ու ժայռի մեջ։ Այնտեղից անցնում է կնոջ արգանդը, եղիացնում նրան, և սերունդները շրջապտույտ են կատարում կրկնելով իրար։ Հոգին կարող է լինել ամենուր, անել ամեն ինչ, դրա համար մարդիկ վախենում են նրանից՝ գգուշանալով շարժել նրա բարկությունը։ Ումեցած ամեն ինչից՝ բերքից, անասուններից, իրեղենից բաժին են հանում հոգուն, ամեն առիթով հարգում նրա հիշատակը, երբեք բացասաբար չեն արտահայտվում հանգույցալի մասին։ Շաբաթ երեկոները լինում են գգոն և ուշադիր. դա հոգիների այցելության օրն է, ջրի հետ գործ չեն ունենում, լրիսերը չեն հանգցնում, երկար դրսում չեն մնում։

Ասոր կիրամուտք է, ելիր տուն եկոր,
Խաս լաթերդ հագիր, ժամէն տուն եկոր¹²։

բ) Ամենայն հավանականությամբ, առաջին նլութական, տեսանելի, միաժամանակ և առեծվածային երևույթը, որ ներգործել է մարդու զգայարանների վրա և առաջ բերել իրձվանքի, ջերմության զգացումներ, արևի ժագումն է։ Եվ ընդհակառակը՝ մայրամուտը, առավել և արևի իսակարումը զուգորդված են սարսափի, վշտի ու անելանելիության ոդքերգական ապրումներով, իգուր չէ, որ բանագիտության մեջ հայտնի առասպելական դպրոցի ներկայացուցիչները ա-

ռասպելաստեղծման հիմնային երևույթ էին համարում արևի ժագումն ու մայրամուտը¹³։

Դավանաբար մարդը առաջին ողբերգությունն ապրել է արևին ընդմիշտ կորցնելու վախից։ Նա երկյուղել է, որ չար ուժերը՝ ամպի, հողմի, սառնամանիքի, մութի տեսքով կարող են խափանել արևի աշխարհ գալու ցանկալի իրողությունը և աշխարհը թողնել իսակարի ու պահության մեջ։ Արևը եղել է մարդու ցնծության ու սիսրության արարողը և նրա գոյությունը ապահովող ամենագոր ուժը։ Բարձրադիր, արևահայաց վայրերում կառուցվել են արևին նվերված տաճարներ, նրա ժագումնը դիմավորել են պարով ու աղմուկով, հեղել են մատաղացու անասունի արյունը։ Իսկ արևամուտն ու իսակարումը ուղեկցվել են՝ բգկտելով սեփական մարմինը։

Բոլոր ժողովուրդների պատկերացումներում արևածագը իյորիրդանշում է կյանք, ծնունդ, ամենայն լավ ու բարիք, իսկ մայրամուտը՝ մահ, իսակար, դժբախտություն։ Ղևոնդ Ալիշանը վկայում է, որ *τουτή* (մութ) բառը եվրոպացիների մոտ նշանակում է մեռյալների աստված¹⁴։

Արևի մահկան ու ծննդյան հավերժական երևույթները մարդուն հուշել են, որ մեռած մարդը, որին նույնպես հալածում են չար ուժը, արևի նման կարող է նորից ծագել, կենդանանալ։ Արևը գնում է ուրիշ աշխարհ և վերադառնում։ Մարդն էլ գնում է ուրիշ աշխարհ և երբեկ կվերադառնա։ Արևը «մեռնում» է, աշխարհին իսակար է պատում, մարդը մեռնում է՝ անհրաժեշտ է սև հագնել։ Բոլոր ժողովուրդների համար ընդհանուր սգո սև կամ սպիտակ գույները պետք է բացատրել արեգակ-իսակար, ցերեկ-գիշեր, լրիս-մութ գուգորդումներով։

Թաղման հանդեսները կատարվում էին և են մինչև արևի մայր մտնելը, հիմնականում արևի հայտնվելուն ի տես։ Ժողովուրդը իմբրվել է հանգույցալի շուրջը և լացով, իսելահեղ շարժումներով և վայնապունով ձգտել է գրավել ա-

¹⁰ Երենց Գ., Վանայ սագ, մաս 1, Թիֆլիս, 1885, էջ 73։

¹¹ Դանականյան Ա., նոածանի, Երևան, 1960։

¹² Փափազեան Ա.Տ., Մահերդ Ալու-Բազարի, «Բիւրակն», Կ.Պոլիս, 1900, № 43, էջ 676։

¹³ Կոկկյարա Ճ.ք., Իстория фольклористики в Европе, Москва, 1960, с.201.

¹⁴ Ալոնդ Ալիշան, նշվ.աշխ., էջ 416։

ուսի ուշադրությունը, հանգուցյալին հանձնել նրա խնամակալությանը: Ամեն ինչ արվում էր ի ցույց արևի, արևամուտից ենտո յուրաքանչյուր արարք անիմաստ էր դառնում.

Անտարակույս կողրային նրանք մինչեւ աղեւամուտ

Եթե Աքիլլ Ազամեմնոնին մոտենալով չասեր նրան...¹⁵:

Թննելով գայլի առնչությունը ռումինական թաղման ժեսի հետ և նրա հիշատակությունը որոշ սգո երգերում, S. Ավեշնիկովան գրում է.

"Этот не часто встречающийся тип плача относится к жанру так называемых "зорь" (zorile), которые исполняются группой женщин рано утром на заре перед восходом солнца в течении всех трех дней, предшествующих похоронию, или только в последний день, а в некоторых зонах Баната - в первый день после похорон"¹⁶.

Պարզ է, որ «зорь» կոչված սգո երգերի գոյությունն արդեն, մանավանդ հատկապես արշալույսին երգվող, խոսում է նաև սլավոնական ժողովուրդների թաղման արարողություններում արևի խաղացած մեջ դերի մասին:

Լեռների վեր չայիր չիմեն է,

Ըմմեննուն արեւ է, մեզի տուման է¹⁷:

Ողորում է հայկական սգո երգը: Ոչ մի ժողովուրդ այնքան տեղանուններ ու անձնանուններ չի կապել արևի հետ, որքան հայ ժողովուրդը: Հայերը իրենց կոչել են արևորդիներ, Արևի անունով գավառ կար Երասիի հյուսիսային կողմում Արևիք, հայոց օրացույցը գարդարում էին Արևի անունը կրող ամիսն ու յուրաքանչյուր ամսվա ամդրանիկ օրը: Բնորոշ բացատրություն է տալիս Վ. Տեր-Մինասյանը իր մեջրերած տապանագրին.

Յիսուն ամողունեցի զարեւ մարդոց,

Իսկ արդ ողջունեմ զարև Աստուծոյ:

Արեւու այսօրինակ յիշատակութիւնն այսքան գերաթռիչ երեւակայութեամբ ի հեթանոսութե-

ան արեւապաշտ եւ ի քրիստոնէութեան արեւասեր հայ մտքի միայն յատուկ է»¹⁸:

Դայոց աղորքներն ու շարականները բազմիցս դիմում են արեգակին, որպես արդարության, մաքրության և աշխարհի փրկչի խորհրդանիշի, ամենագոր, ամենապայծառ ու բարի ուժի: Մեր եեքիաբները հարուստ են արևկ խորհրդանշող կերպարներով, արևի անունը կրող բույսեր ունենք անգամ. արևօրիկ, արեգակնայիկ, արևապաշտ:

Ապրոդ ու մաքառող հայը, ճաշի ժամին, երբ որպես սեղանի գարդ, իմաստության գոհարների նման վայլատակում են մեղմանուշ կենացները, դարձյալ չի մոռանում արևին և այդ անառակելի ու անթերի հկինակությանը նոր կատարելություն է մաղթում. «Ես էլ էն արեգակի կենացը, Վուր սառած մարդուն կու տաքցնե ու չի վառի»¹⁹:

Դայաստանի մի շարք շոշաններում դեռ պահպանվում է արևածագը դիմավորելու սովորությունը: Առանձնապես այն պարտադիր է քաղման ու հարսանիքի հաջողող առավուտյան²⁰:

Այժմ էլ պառավ մամիկները արևածագին երեսներին իաւ են հանում ու շշնջում. «Իմ իրեսս թու վատանդ տակը, ա իրիքնակ»: Արևին են մրմնջում եղասերն ու բաղձանքները... Նորածին մանկանը հանում են տան պատշգամրը, որ ծագող արևկ նկատի նրան ու առնի իր հովանու ներքո:

Արևից գրկելով ու արև կորցնելով, հանգուցյալները ժողովուրդի հոգածությամբ անարև չեն մնում. Վազագալույսը՝ թույլ ու աղոտ, անուժ ու անօգնական «մեռելի փայ արևն է»:

Ճրագը, լույսը, ճերմակը արևի խորհրդանիշներն են: Անեղելատանը յոթից քառասուն օր ճրագը չեն հանգնում, եանգուցյալի ծեռքը մոներ են տալիս, ողորմարասը ճրագով են խնում:

¹⁸ *Տեր-Մինասյան Վ.*, Անգիր դայրութիւն եւ առակը, Կ.Պոլիս, 1893, էջ ԾԵ:

¹⁹ *Տեր-Ավելանդրյան Գ.*, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, մաս Ա, Թերքիս, 1886, էջ 219:

²⁰ *Լալայան Ե.*, Վասպուրական, ԱՐ, գիրք 25, Թիֆլիս, էջ 52, արևապաշտության հետաքրքիր վկայություն տես նաև *Դալաջյան Գ.*, Ղերսիմի հայերի ազգագրությունը, ՂԱԲ, պ.5, Երևան, 1973, էջ 262:

¹⁵ Դոմերոս, Բյիական, Երևան, 1987, էրգ 23:

¹⁶ Հայանուկօթ Դ., յկան.սու., ս.129.

¹⁷ Ճանհիկեան Յ, նշվ.աշխ., էրգ 99:

Հանգուցյալին օրինում են հետևյալ արտահայտություններով, «լուսահոգի», «լույս ծլլա հոգուն», «լուսը կաթ գերեզմանին», «լույսը զրկե» և այլն: Ննջեցյալի պատաճի կամ ներքնաշորերի ընդունված գույնը սպիտակն է՝ նրա արդարության ու անմեղության առհավատցան, իսկ ծածկոցի ու դագաղի, սգվորների հազուստների գույնը սկը՝ հարազատների վրշտն ու կսկիծը խորհրդանշող («սև երես», «սև կապես», «սևավրդվես» և այլն):

գ) Հացը սրբություն է հայ ժողովրդի համար: Հացով երդվում են, պատվրում ու մտերմանում, հացի համար պայքարում, հացով գոյատևում: Հացը դեր ունի մեր բոլոր ծիսակատարություններում, նաև մահվանն առնչվող արարողություններում: Այս պարագայում հացը կատարում է երկակի դեր՝ չարխափան և հոգու հագեցման: Չար ոգիների մերձենալը խափանելու համար հանգուցյալի կըծքին հաց էին դնում, բերանին՝ նշխար, հոգեվարքը թեթևացնելու համար հաց էին բաժանում, մինչև «գերեզմանը փակելը» հոգեբաժին էին տալիս, բարեկամները «սգասեղան» էին ուղարկում մեռելատում, թաղումից հետո «հոգեհաց» էր մատուցվում, հացով և այլ ուտելիքներով էին նշում «յոթը», «քառասունքը», «տարելիցը», «մեռելոցները»: Յուրաքանչյուր տոնի գերեզման տանելու համար առանձնահատուկ հացեր էին թիւում (թըթխմորով, բաղարջ, գաթա և այլն): Այս առումով ուշագրավ է մինչև Վերջերս Զանգեզուրի և Ղարաբաղի գյուղերում պահպանված «տըշտըմաղի» ավանդույթը. հարսանիքի հացը թիւելու ժամանակ հավաքվում էին այդ գործին հմուտ կանայք, այսուր մաղում և սկսում խմոր հունցել, երբ գալիս է աղը լցնելու պահը, նրանցից ավագը ամեն բուռ աղը շաղելիս, հիշում է հարսանքատան որևէ հանգուցյալ հարագատի և ողորմի տալիս նրան:

Երագում հանգուցյալ տեսնելիս հաց էին նետում գերեզմանատան կողմը, մտածելով, որ նա քաղցից դրդված է այցելության գալիս: Հաց թիւելիս ավելացած այսուրը տուն չէին տանում, լցնում էին թոնիրը՝ «անտեր մեռելների հիշա-

տակին»: Գերեզման փորողներին հենց նույն օրը երեկոյան յոթական հաց էին տալիս, որպեսզի բահի ու թիու ծայնը կտրվի ննջեցյալի ականջից»: Այս բոլոր սովորությունները՝ մասնակի փոփոխություններով, մինչև այժմ էլ պահպանվում են հայկական գյուղերում:

Զուրը որպես կենսապահովման անհրաժշշտ տարր, իր մաքրագործող ու կենսաբեր շնորհով, թաղման ծիսակատարությունների մեջ ևս իր արժանի տեղն է գրավում հացի կողքին: Հոգեղարձ եղած մարդուն մի բաժակ ջուր են տալիս, դյուրացնելու համար մահը: Ննջեցյալի կողքին, իսկ թաղումից հետո նրա սենյակում մի գավաթ ջուր են դնում: Դիակը լողացնում էին, որ մաքրվու չար ոգիների հետ շփվելուց առաջ եկած պղծումից և մաքուր գնա «Աստծո դուռը», լողացնելիս երեք անգամ ջուր էին լցնում նրա աջ րուրը և քսում երեսին, որ նա «ինքնակամ սրբվու մեղեքից»: Նախօրոք իմանալու համար հիվանդը կառողջանա՝, թե ոչ, նրա իմած ջրի մնացորդը սրսկում են շան վրա, եթե սոսկում է, դողում, ուրեմն հիվանդը մեռնելու է:

Զուրը մաքրում է բոլոր կեղտերն ու մեղքերը և արագ իրեն է փոխանցում մահվան սարսուռն ու հրեշտակների ագդեցությունը: Տանը մարդ մահանալու ղեպքում բոլոր ջրերը թափում էին, երր խոսք էր լինում հանգուցյալի ճասին, ջուր էին թափում ու շշնջում. «Զուր դառնաս»: Դագաղի ետևից ջուր էին նետում, երբ ջուր բերելիս հուղարկավերության թափորի էին հանդիպում, ջուրը թափում էին և ետ դառնում, եթե տուն տանեմ՝ մահ կպատահի: Թարմ գերեզմանաթմունը ջուր էին հեղում, վայսեցածին թժկելու համար նրա ծեռքերն ու ոտքերը լվանում էին նոր գերեզմանի վրա և ջրամանը ջարդում: Գյուղերում ննջեցյալի առկայության ղեպքում ջրից եեռու են մնում: Դարաբաղում այսպիսի արտահայտություն կա. «Կերեզմանը ճուր ըղնել»: Եթե դատարկ գերեզմանափոսի վրա անձրև է տեղում, երկարատև անձրևներ են ակնկալվում: Երաշտի ժամանակ մի նոր ննջեցյալի գլուխ էին նետում ծովը կամ ջրի մեջ գցում. սա ջրերի

բարկացած աստծոն մատուցվող մարդկային գո-
հի հիշողությունն էր: Սգվորներին սգից հանում
էրն «սգարադնիքի» հանդիսավոր արարողու-
թյամբ: Այս ամենը վկայում է ջրին վնրագրվող
մեծ ուժի ու գորության մասին: Դայ ժողովողա-
կան բանահյուսությունը հարուստ է հրաշք ադ-
րյուրների, կախարդական ծովորի ու գետերի
մասին հեքիաթներով ու գրուցներով: Դայց
հերոսավեպի բոլոր դյուցագունները իշենց
գերբնական գորությունները սատանում են ջրից:

ո) Դարեր շարունակ ժողովուրդը վստահել է
ինոսքի ներգործում մեծ ուժին, առանձնապես
կարևորիւմ էր չափածո ինոսքը: Այդ են վկա-
յում վաղմնական ժամանակներից եկող հմայա-
կան րանաձևերը, աղոթքներն ու մաղթանքնե-
րը, երգերը: Պարտադիր են սգվորներին ուղ-
ղվող միխթարանքի ընդունված բանաձևումնե-
րը. «Աստված իոգին լուսավորե», «Ետի դատա-
ստամը քաղցր անա», «Ռուն ապրիս», «Սուլը հոգով միխթարվեք», «Աստված օղորմի», «Էս տան վերջին դժբախտությունը լինի», «Դրախ-
տի փայ ըլի» և այլն: Ննջենցյալին լողացնելիս,
պատաճելիս, դագաղը կամ նաշը ծեռքից
ծեռք փոխանցելիս, գերեզման փորողները իրար
հաջորդելիս, դիակը գերեզման իշեցնելիս, հո-
ղով ծածկելիս, փողոցում թաղման թափորի հան-
դիպելիս և այլ բոլոր պահերի համար գործած-
վում են չափածո և արծակ բանաձևումներ՝²¹:
Օրինակ, երբ տան մոտով անցնում էր թափորը,
այդ տան հիվանդները դուրս են գալիս պատշ-
գամբ կամ րակ, իսկ տարեց կանայք թափ են
տալիս սրանց շորերը և շշնջում:

Թիւ, թիւ, թիւ

Սեռել

Սեռելոցին,

Յետ երթաս, առաջ չի գաս,

Թիւ, թիւ, թուքն ի երես,

Չար սատանան սեւ երես,

Առնեմ զչուլ, վերցմեմ զշոր,

*Չար իրեշտակմերն թափիին ի հուր*²²:

Սա հմայական, ոգիներին թովնլու նպատա-
կով ասված մի աղոթք է, որ հույս ունի ոչնչաց-
նել հիվանդությունն առաջ բերող չար ոգինե-
րին ու սատանային, ցավը հանձնել դիակն ու-
ղեկցող իրեշտակին:

Այնքան ուժեղ էր հավատը ինոսքի նկատ-
մամը, որ օրինակ վաւնեցիները համոգված էին,
որ եթե մեռելի վուա «Փառք ի թարծուն» չեր-
գվի՝ գոռնադար կլինի²³:

Ինչպես օրինաճն ու մաղթանքը հաջողու-
թյուններ են բերում մարդուն, այնպես էլ անեծ-
քը կարող է դժբախտություններ ու ողբերգու-
թյուններ առաջացնել: Բարեպաշտ մարդը ծգ-
տում էր ինուսափել չար գործերից, չարժանա-
նալ անեծքի:

ե) Դարերի պատմություն ունի նաև քարի ու
հողի պաշտամունքը, այն տարածված էր բոլոր
հնեւլուպական ժողովուրդների մեջ, ոայց ա-
ռանձին ցայտունությամբ է արաւահայտված հայ
ժողովուրդի հավատալիքների համակարգում, քան-
գի մեր երկիրը իսկապես գեղեցիկ, իսորիրու-
պար քարերի ու ժայռերի, քարափների ու քա-
րայընների շտեմարան է: «Ո՞չ ալիսի զգար, ի՞նչ
ալիսի ըներ այդ Յայկազն քանի մի սերունդ
յետնածին քան զՅայկն, այդ երկու լերանց մի-
ջոց կանգնած. մանաւանդ երբ (ինչպես կար-
ծուի, ասկե երեք-չորս հազար տարի առաջ,
դեռ միայն անշարժ ճերմակ չէին անոնց գագա-
թունքն, այլ վերեն կամ կողերեն՝ շարժուն կար-
միր, այլ կ'երեւաը կու փայլվիրէր գոնէ ժուխի
կամ ընդհատ րոցի ծեռով և երրեմն-երրեմն կ'ո-
րոտար, կու հառաջէր իրեղեն շունչերով»²⁴. -
գրում է Ղ. Ալիշանը: Դայերի քարապաշտ ժողո-
վուրդ լինելու մասին է վկայում նաև Ազարան-
գեղոսը: Մարդակերպարան ժայռերին փոխա-
ռինել են կուռքների քարե արձանները, մաքու-
պատան քարայրները դարձել ոգիների ու
չարքերի օթևաններ: Քարը նախամարդու ծեռ-
քում դարձել է գենք ու գործիք, մարդիկ վա-

²¹ Սգոն և թաղման ծեսի հետ առնչվող րարեմաղթություն-
ներ տես Դարությունյան Ա., Անեմքի և օրինաճի ժանրը
հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 243-245:

²² Հայայան Ե., Առև-Տարոն, ԱՅ, գիրք 23, էջ 188:

²³ Մրգանձոյամ Գ., նշվ.ախ., էջ 148:

²⁴ Առներ Ալիշան, նշվ.ախ., էջ 31:

խից, վշտից ու հիացմունքից «քար են կտրել»: Պատմական Հայաստանի տարածքում սփոփով են հարյուրավոր սուրբ քարեր, որոնց գոհ և մատադ է մատուցվում, որոնցից օգնություն է ակնկալվում: Հայկական րոլոր ընակավայրերում հանգուցյալի վրա քար է զցվում, որ բացատրվում է գերեզմանի ամուր լինելու ցանկությամբ, քարի երկարակեցությամբ պայմանավորված հիշատակի հավերժությամբ, թաղման վայրի հարատևությամբ և մարդկային հոգիների քարին անցնելու ոգեպաշտական պատկերացմանը (վերջինս դիսում է առաջիններից): Հանգուցյալի գլխի տակ քար էին դնում, դագաղի և լողացրած տեղում՝ նույնպես: Հայերի րոլոր սրբավայրերն ու մատուցները քարակով են: Մեր բանահյուսությունը հարուստ է այս կամ այն քարի ու ժայռի հետ կապված ավանդություններով (Նորավանք, Գրիգոր Նահատակ, Վարդան գորավար, Կիրակոս Տգնավոր, Վարդիկի գերեզման, Ագուավախաչ, Ագնավորի գերեզման, Եգան ուխտատեղի, Ուղուդի մահարձան, Աղջկարերո, Սուրբ Սարիրեկ, Զուխտակ խաչ և այլն)²⁵:

Չողի պաշտամունքի հետ է կապված գերեզմանի հողին րուժիչ գորության վերագրումը. այդ հողից լցնում են չըեր կնօշ մեջքին, ուտեցնում հիվանդին: Եթե հանգուցյալի աչքերը չեն փակվում, մի քիչ հող են լցնում աչքերին, պատճառարանելով, որ նա աշխարհից չի կշտացել և միայն հողը կիագեցնի նրան: Սասունում նաշի ետևից հող էին ծգում, որ տան «ցավ ու չոռն էլ տանի»: Եվ, որ ամենակարևորն է, հագումցյալին պահ են տալիս մայր հողին:

գ) Քննարկող ժեսի ընթացքում խաչը օգտագործվում է որպես չարիսափան միջոց: Հանգուցյալի ծեռքերը կրծքին էին խաչում, դեմքը ծածկում խաչած կտորով, թահն ու փայտը խաչած դրվում էին դատարկ գերեզմանավուսին, քահանան խաչով կնքում էր հողաբումը, հողարկավորները համրուրում էին քահանայի խաչը, խաչ անում երեսներին:

²⁵ Դանալանյան Ա, Ավանդապատում, Երևան, 1969:

Յմայական դեր ունեն երեք, յոթ, քառասում թվերը: Դագաղը երեք անգամ բարձրացնում, ցած էին դնում, երեք անգամ խփում շենքին. դուռը երեք անգամ փակում-բացում, մահացած երեխայի ծեռքերում դրված մոմերը երեք անգամ վասում-հանգնում էին, լողացնելիս երեք րուռ ջուր էին շփում դիակի դեմքին, պատաճքի կտորը երեք անգամ իրար էին քաշում, մնացորդը երեք օր հետո նվիրում էին լողացնողին, ուրվառով երեք անգամ խումկ էին ծխում գերեզմանափոսի մեջ, յուրաքանչյուր հուղարկավոր երեք րուռ հող էր լցնում դագաղին, եթե հուղարկավորության ընթացքում մեկը փոշտում էր, երեք անգամ խփում էին մեջքին, մեռելից վախեցածին գերեզմանի շուրջ պտտեցնում էին երեք անգամ... այս թվարկումը երկար կարելի է շարունակել, հաջորդելով նաև յոթ և քառասում թվերի հետ կապված սովորությունները:

է) Ամեն մի հաջողություն կապում էին աջի հետ (հայերեն՝ աջ, աջողություն, ոռւսերեն՝ ոթա, ոթածա, ոթածեա, անգլերեն՝ right, որ նշանակում է աջ, ծիշտ, ուղիղ, լավ, կարգին, և այլն), իսկ ծախը ծախորդության և անհաջողության խորհրդանշէ է (ծախլիկ, ծախորդ, ծախություն...): Ժողովոյի պատկերացմանը վերջին դատաստանի ժամանակ մարդու աջ ուսի րարի հրեշտակը կրվարկի նրա կատարած րարի գործերը, իսկ ծախս ուսի չար հրեշտակը չար արարքները, այս րոլորը կղուվեն նժարների վոա: Եթե րարությունը գերակշռեց, հոգին կանցնի քրիստոսի աջ կողմը՝ ուր կահվաքվեն արդարները, իսկ եթե ծանր եղավ չարության բաժինը՝ կանցնի ծախս կողմը՝ մեղավորների մոտ: «Նում մարդը րոլոր դժբախտությունները ոդրացել է դասավորնան գերակշռող տեղավոխությամբ դեպի ծախս-թարս գնացող պարերով», - գրում է ժ. Խաչատրյանը²⁶:

«Թարս» հասկացողությունը ժողովողական մտածողության մեջ կապվում է նույն ծախության հետ: Գերեզմանը վորելուց հետո րարի և փորիչի երկաթ բերանները շեղ էին հացնում:

²⁶ Խաչատրյան Ժ. Զավախիք հայ ժողովրդական պարերը, ՀԱԲ. պ.7, Երևան, 1975, էջ 53:

Հանգուցյալի ծին թարս թամբած էին տանում գերեզմանատուն (ասորիները, օքինակ, տանում էին ուղիղ թամբած)²⁷, մերձավոր տղամարդիկ հանգուցյալի գենքերը կապում էին շրջկած և քայլում հուղարկավորների առջևից: Սասունում հիվանդի մահանալուց հետո հարգատները վերնազգեստները հագնում էին «շըջոնք»²⁸: Եթե սովորաբար լվացած շորերը

թարս էին փռում, ննջեցյալներինը փռում էին շիտակ, ննջեցյալին լողացնելիս օգտագործած ամանեղենը շրջում էին րերանքսիվայո²⁹: Այս ծախ-թարսի, շեղ-շոջվածի իրավիճակները կան-իսանչում են մի դրությունից մի այլ դրություն տեղափոխվելը, այսինքն մի աշխարհից անցումը մյուս աշխարհին:

²⁷ Լալայան Ե., Կասպուրականի ասորիները, ԱՐ, գ.24, էջ 230:

²⁸ Կարապնոյան Ե., Սասուն, Երևան, 1962, էջ 112:

²⁹ Սլավոնական ազգերը շրջում էին նաև դագաղի տակ դրված սեղանը, գերեզմանին լցրած ջրի ամանը, մեռելատան բուրոր հայելիները և օգաազործվող ամանեղենը, հազուստները շրջած էին հագնում:Տե՛ս՝ H. Tolstoy, Переворачивание предметов в славянском Погребальном обряде, Погребальный обряд, Москва, 1990г., сс.119 - 128.